Փրկչի, ուր ժողովեալ էին միաբանք եւ ժողովուրդք 'ի ժամ ճաշու, և մոտեալ յեկեղեցին խանդարեցին զժամերգութիւնն, և կալեալ զոմանս դանիւք և խոշտանգանօք ճգեցին արտաքս, և զոմանս հարկանելով մուծին 'ի Սիոն ուր եղին 'ի բանտի, և այլք փախուցեալ եկին 'ի Ս. Յակոբ։ Լուեալ Եպիսկոպոսաց զեղեալսն՝ առաքեցին զայլազգի դռնապանս և զՂավազ Վէզիրին՝ որ եկեալէր յայնժամ ընդ տեսչին Յոսպէի իբրեւ Մուսաչիր, աղաստել զբանտարկեալսն 'ի Սիոն։ Սակայն կարի դառնացեալ սիրտ բոլոր միաբանաց, ծերունի Եպիսկոպոսաց և Վարդապետաց ընդ այսպիսի անարգանս նոցին, կոչեցին զԵնիչէրի Աղասին և յանձն արարին նմա զվանս Ս. Յակոբայ՝ և ինքեանք ամենեքեան եղին 'ի ճանապարհ յետիոտս իջանել 'ի Յոսպէ, և հասին մինչ 'ի գիւղն կամուրջի 'ի Գալլնեա. լու եղեւ 'ի քաղաքին թէ թողին միաբանք Հայոց զվանս իւրեանց և գնացին 'ի բաց։ Յայնժամ Միւֆթին, Դպրապետն դատարանի՝ Եէնիչէրի Աղասին և այլք ոմանք 'ի մեծամեծաց քաղաքին յարուցեալ պնդեցան զհետ նոցա, և հասեալ 'ի ճանապարհի բազում թախանձանօք և աղաչանօք հազիւ կարացին դարձուցանել զնոսա յետս՝ և գրբեցին զեղեալն առ Ահմէտ Փաշա։ Այսպիսի էր նեղութիւն ժամանակին, թող զպակասութիւն հայի, զի ոչ կարէին պատրաստել պարէն միաբանաց, և էին 'ի կասկածի ցրուիլ և գնալ նոցա յԵրուսաղէմէ (1801. յ8 Փետրվարի)։ Եւ 'ի սոյն ժամանակի հասանէ գումար տոկոսաւոր պարտուց 74,730 դահեկան, սկսեալ յաւուրց անտի Յովակիմայ եւ Պետրոսի։

Իսկ Մէհէմմէտ Փաշա՝ որ նստէր 'ի Ռեմլէ՝ կոչեաց առ ինքն զԹարգմանս յԵրուսաղէմէ և բռնադատեալ ըզնոսա էառ յերկուց վանաց 100,000 դահեկան. զայս նամակ ողբովք և արտասուօք գրեն 'ի Կոստանդինուպոլիս, զի բազում աղաչանօք ժողովեալ էին զզարդս կանանց և վճարեալ, երկուցեալ յապագայ չարեաց և նեղութեանց. և ոմանք 'ի միաբանաց սկսան մեկնիլ յԵրուսաղէմէ, եւ այլոցն սպասէին առնուլ զպատասխանիս նամակացն, եւ ըստ այնմ գործել։

Փակեցան դրունք քաղաքին Երուսաղէմի, և պատուէր